

# Անիպեմզա

Վարչական ղեկավար՝ Հարություն Թառլանյան

Հեռ 098 09 20 90

Մակերես՝ 6.7կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 392

[anipemza.shirak@mta.gov.am](mailto:anipemza.shirak@mta.gov.am)

Համայնքի ներկայիս անվանումը –ԱՆԻՊԵՄԶԱ

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը –1926թ

Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Բագրավան, Նոր Արթիկ, Թլիկ

Հեռավորությունը մայրաքաղաքից - 100

Հեռավորությունը մարզկենտրոնից - 45

Կրթական հաստատություններ - 1

Մշակութային հաստատություններ - 1

Արտադրական ձեռնարկություններ - 7

Բնակչության հիմնական զբաղմունքը – Գյուղատնտեսություն, քարիարտ.

Հոգևոր կառույցներ - 1

Անիպեմզա համայնքը Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո կառուցված առաջին արդյունաբերական քաղաքատիպ ավաններից է: Բնակավայրի հիմնադրումը պայմանավորված է եղել 1926 թվականին Անիպեմզա կոմբինատի կառուցմամբ: Բնակավայրի հիմնադիրներն են հանդիսանում համայնքի ներկայիս տարածքի հարևանությամբ գտնվող Զաղագյուղի բնակիչները, Անիպեմզա կոմբինատում աշխատանքի բերումով տեղափոխված ինչպես հարակից բնակավայրերից, այնպես էլ հանրապետության տարբեր վայրերից գործուղված մասնագետների ընտանիքները:

Սկզբնական շրջանում բարձր է եղել բնակչության հոսունությունը: Անիպեմզա ավանը որպես բնակավայր լիարժեք կարգով ձևավորվել է 1936 թվականին, երբ կոմբինատը համալրվել է անհրաժեշտ բանվորական աշխատուժով և մասնագետ կադրերով: Հանրապետության վարչատարածքային շրջանային բաժանումից հետո, 1936 թվականին ավանը ընդգրկվել է Անիի շրջանի կազմում, իսկ 1996 թվականին ՀՀ վարչատարածքային մարզային բաժանումից հետո, Անիպեմզան ստացել է գյուղական համայնքի կարգավիճակ և որպես վարչատարածքային առանձին միավոր ընդգրկվել է Շիրակի մարզի կազմում:

Անիպեմզան ընդգրկված է հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում:

Անիպեմզայում հայտնաբերված է զարգացած երկաթե դարի դամբարանաշատ /Ք.ա. I-II հազարամյակներ/, որի պեղումների ժամանակ գտնվել են զենքեր, զարդեր և պատմամշակութային այլ արժեքներ: Արժեքավոր է եզիպտական մածուկից պատրաստված առյուծի փոքր արձանը և պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող 5-րդ դարի կառույց Երերույքի տաճարը:

Բնակավայրի տարածքը հարուստ է շինարարական նյութերով՝ պեմզայով, տուֆով և բազալտով:

Բնակավայրը հատկապես զարգացում է ապրել հետպատերազմյան տարիներին: Կառուցվել է 19 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 120 բնակարաններով, կառուցվել է դպրոց, գրադարան, մշակույթի տուն, հիվանդանոց, մանկապարտեզ, առևտրի և բնակչության սպասարկման տարբեր օբյեկտներ: Բնակավայրը, լինելով արդյունաբերական ավան, իր հիմնադրման օրվանից առ այսօր վարելահողեր չի ունեցել, իսկ 539.67 հաարտները աղքատիկ են և ոչ պիտանի անասնապահության ճյուղի զարգացման համար: Ռոտոման և կենցաղային կարիքների համար ջուրը պոմպակայանի միջոցով հանվել է բնակավայրի հարևանությամբ հոսող Ախուրյան գետից: Բնակավայրի սոցիալ-տնտեսական թույլ զարգացվածությունը և բնակչության ցածր կենսամակարդակը ներկայումս հիմնականում պայմանավորված են գյուղատնտեսական նշանակության հողերի և Անիպեմզա կոմբինատի լուծարմամբ: